ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2022/69

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
21 հուլիսի 2022 թ. N 69

ԱԲՈՎՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Աբովյանի պետական էներգետիկակական քոլեջ» ՊՈԱԿ

Գործունեության հասցեն՝ ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Ուսանողական թաղամաս 4

Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2022թ.հուլիսի 21-ին քննարկեց Աբովյանի պետական էներգետիկակական քոլեջի (այսուհետ՝ ԱՊԷՔ, քոլեջ, ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	9 փետրվարի 2021 թ.
ինքնավերլուծության ներկայացում	7 հունիսի 2021 թ.
փորձագիտական այցի իրականացում	4 - 7 հոկտեմբերի 2021 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում	30 դեկտեմբերի 2021 թ.
թերությունների վերացման ծրագրի ներկայացում	27 հունվարի 2022 թ.

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 4ը՝ **«Կառավարում և վարչարարություն», «Մասնագիտության կրթական ծրագրեր», «Հետազոտություն և զարգացում» և «Արտաքին կապեր և միջազգայնացում»** գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Աբովյանի պետական էներգետիկակական քոլեջի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. **Առկա են որոշակի խնդիրներ որակավորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, սակայն առկա են նաև առաջխաղացման միտումներ և օրինակներ**

ԱՊԷՔ-ն էներգետիկայի ոլորտում մասնագիտացած բացառիկ և միակ միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է ՀՀ-ում: Քոլեջի կողմից առաջարկվող մասնագիտությունների մի մասը բխում է էներգետիկայի ոլորտի կարիքներից, մյուսը՝ առավել պահանջված և արդիական մասնագիտություններ են: Առաջարկվող մասնագիտությունների կրթական ծրագրերի բովանդակությունը մեծապես հիմնված է համապատասխան պետական կրթական չափորոշիչների վրա:

Քոլեջում, չնայած բավականին աշխատանք է կատարված, սակայն դեռևս առկա են որոշակի խնդիրներ: Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրությունը քոլեջում կանոնակարգված չէ, և չկան ակնկալվող վերջնարդյունքներին դրանց համապատասխանությունն ապահովող մեխանիզմներ: Հմտությունների ձևավորումը թերի է, իսկ ծրագրերի բարելավմանն ուղղված մեխանիզմները՝ սակավ: Դասախոսները նախընտրում են դասախոսելու մեթոդը գրականության բացակայության պատճառով, իսկ պրակտիկան ունի ավելի շատ գործնական պրոցեսներին ծանոթանալու ձև, քան փորձի միջոցով գործնական հմտությունների ձևավորում: ՄԿԾ-ների առաջավոր փորձի համեմատական վերլուծություն (բենչմարքինգ) քոլեջում չի իրականացվել:

Միևնույն ժամանակ մշակված են դասընթացների ծրագրերը, առկա են մոդուլների ուսումնական ծրագրեր, որոնք համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին: Քոլեջում գործում են դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետության ուղղակի և անուղղակի գնահատման մեխանիզմներ:

ԱՊԷՔ-ում գործում են դասախոսական անձնակազմի ընտրության ընթացակարգեր, մշակված են նրանց նախնական գնահատումն ապահովող որոշակի մեխանիզմներ, որով կարևորվում են նրանց հատկապես մասնագիտական և մանկավարժական կարողությունները և հմտությունները: Առավելություն է տրվում փորձառությանը և դասախոսական կազմի գործնական հմտություններին: Քոլեջում գործում է երիտասարդ և համապատասխան մասնագիտական որակներ ունեցող կադրերով, գործատուներով համալրման համակարգ: Նոր ընտրվածներին տրվում է փորձաշրջան, որն անցնելուց հետո միայն կարող են դառնալ դասախոսական կազմի անդամ: Ընդհանուր առմամբ, քոլեջն ապահովված է մարդկային ռեսուրսներով:

ԱՊԷՔ-ի ջանքերն ուղղված են ուսումնական գործընթացի կազմակերպման և քոլեջի առաքելության ու ռազմավարական նպատակների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսային բազայի ապահովմանը: Չնայած ֆինանսները սահմանափակ են, բայց քոլեջն ապահովված է շենքային բարվոք պայմաններով, լսարանները վերանորոգված և կահավորված են: Ջանքեր են իրականացվում գրադարանային ֆոնդի և այլ ենթակառուցվածների համալրման համար:

2. ***Կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում է, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը:***

Ընդհանուր առմամբ, ԱՊԷՔ-ի ծավալած գործունեությունը համապատասխանում է ՄՈՒՀ-ի սահմանած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ Որակավորումների ազգային շրջանակին, չնայած, որ դեռևս հստակ չէ, թե քոլեջը կենտրոնանում է էներգետիկական մասնագիտությունների վրա, թե՝ ընդլայնում է դրանց շրջանակը:

Կառավարման գործընթացներն ԱՊԷՔ-ում կրում են ավելի շատ օպերատիվ, քան ռազմավարական բնույթ: Թեև առկա է ռազմավարական զարգացման ծրագիր, կառավարման բարձրագույն կոլեգիալ մարմինը հիմնականում չի զբաղվում ռազմավարական խնդիրներով:

ՌԾ-ն գտնվում է քոլեջի միայն կառավարման համակարգի ուշադրության կենտրոնում և չի իջեցվում դեպի ներքև համապատասխան ստորաբաժանումներ: Արդյունքում առանձին ստորաբաժանումների հաշվետվությունները գրեթե կապակցված չեն ՌԾ-ի հետ և չեն բխում դրա իրականացումից: Իսկ հաշվետվությունները և քոլեջի գործունեությունը թափանցիկ և առանձնապես հասանելի չեն հասարակությանը:

Թեև առկա են տվյալների հավաքագրման որոշակի մեխանիզմներ և այդ ուղղությամբ կատարված են աշխատանքներ, սակայն հիմնականում բացակայում են հավաքագրված տվյալների խորը և բազմկողմանի վերլուծությունները: Դեռևս չի գնահատվել Կառավարման համակարգի արդյունավետությունը: ՈԱ ներքին համակարգը և համապատասխան ենթակառուցվածքը համեմատաբար նոր են ձևավորվել և արձանագրվել են զարգացման դրական միտումներ: Աստիճանաբար ներդրվում են ՈԱ քաղաքականություն և ընթացակարգեր, և որդեգրված է կառուցողական, ինքնաքննադատական մոտեցում:

3. ***Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը բավարար չեն աջակցում որակավորորումների արժանահավատ շնորհմանը.***

ԱՊԷՔ-ում սահմանված չեն հետազոտական ոլորտին առնչվող հավակնությունները, չկան միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր, բացակայում է հետազոտությունների իրականացման համար հստակ քաղաքականությունը, չկան ընթացակարգեր և խրախուսման մեխանիզմներ, չի գործում հետազոտություն-ուսումնառություն կապը, ոչ նպատակային է գործատուների հետ

համագործակցությունը հետազոտության ոլորտում: Առկա չեն նաև ինստիտուցիոնալ մեխանիզմներ ուսանողների հետազոտական գործունեությունը խրախուսելու ուղղությամբ, զգացվում է քոլեջի ռեսուրսային անբավարարությունը հետազոտական աշխատանքների համար: Այս ամենը վտանգում են ուսանողների վերլուծողական հետազոտական աշխատանքների իրականացման հնարավորությունները:

ԱՊԷՔ-ում ձևավորված է ներքին և արտաքին հաշվետվողականության համակարգ, գործում են տեղեկատվության հասանելության և դրանց փոխանցման մեխանիզմներ: Չնայած արտաքին հաշվետվողականությունը իրականացվում է համակարգված ձևով, սակայն ներքին հաշվետվողականության համակարգը թույլ չի տալիս ամբողջական պատկերացում կազմել քոլեջի վերաբերյալ, քանի որ հաշվետվություններում առկա չեն ստորաբաժանումների աշխատանքները ներկայացնող տվյալները, բացակայում է վերլուծական բաղադրիչը: Հաշվետվությունները քոլեջի կողմից չեն հրապարակվում, որը վնասում է վերջինիս գործունեության թափանցիկությանը:

Քոլեջն իր զարգացման ներկայիս փուլում ըստ էության չի կարևորում իր միջազգայնացումը: Առկա չեն մեծ հավակնություններ և պլաններ, չունեն արտաքին կապերով զբաղվող ենթակառուցվածք, ցածր է օտար լեզվի իմացության մակարդակը, որի բարձրացման համար միջոցներ չեն ձեռնարկվում:

Ուսանողների հավաքագրման և ընդունելության համար առկա են գործուն մեխանիզմներ: Քոլեջում սովորողներին տրամադրվում է լրացուցիչ պարապմունքների հնարավորություն, ինչպես նաև ստեղծված են կրթական և այլ կարիքների վերահանման համար գործող մեխանիզմներ: Քոլեջում առկա է կարիերայի կենտրոն: Զգալի է ուսանողների բարձր վստահությունը կուրսղեկների նկատմամբ: Գործում են խորհրդատվական ծառայություններ, որոնք սակայն ունեն հստակեցման անհրաժեշտություն: Ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմները ևս արդիականացման և զարգացման կարիք ունեն:

4. Փորձագիտական զեկույցում նշված թերություններն առանցքային են որակավորորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, միաժամանակ հիմքեր ստեղծված են բարելավումների համար:

5. Թերությունների վերացման ծրագիրն իրատեսական է և իրականացման դեպքում կբերի որակական դրական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. «Աբովյանի պետական էներգետիկակական քոլեջ» **ՊՈԱԿ-ին շնորհել պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 /երկու/ տարի ժամկետով:**
   - Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Կառավարում և վարչարարություն», «Մասնագիտության կրթական ծրագրեր», «Հետազոտություն և զարգացում» և «Արտաքին կապեր և միջազգայնացում»,** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը,

2. **Հատուկ ուշադրություն դարձնել**.
   - քոլեջի առաքելության և զարգացման տեսլականի հստակեցմանը՝ հատկապես կողմնորոշվելով մասնագիտությունների շրջանակի հարցում,
   - իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման հստակ և չափելի որակական և քանակական ցուցիչներ ունենալու անհրաժեշտությանը,
   - նախապես հավաքագրված և վերլուծված տվյալների վրա հիմնված որոշումների կայացմանը,
   - դասախոսական կազմի դասավանդման արդյունավետության գնահատման, մասնագիտական առաջընթացի և կայունության ապահովման հստակ մեխանիզմների կիրառմանը,
   - հետազոտական և ուսումնական գործընթացների փոխկապակցմանը, գործնական հմտությունների ձեռքբերմանը,
   - ուսանողների մոտ վերլուծական, ստեղծագործական և քննադատական կարողությունների զարգացմանը միտված ուսուցման կազմակերպմանը
   - արտաքին կապերի զարգացմանը և գործատուների հետ համատեղ ռազմավարության մշակմանն ու իրագործմանը,
   - որակի մշակույթի ձևավորման և շարունակական զարգացմանը, քոլեջի բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի կիրառմանը:

3. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 6 ամիսը մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով ակադեմիայի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
4. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել Աբովյանի պետական էներգետիկակական քոլեջի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2022 թ. օգոստոսի 19
ք.Երևան